ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«14» 11 2024թ.

N ___1___

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) (ՀՎՀՀ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., շ 25/14, բն. 76 բն) 23.09.2024թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկարգով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում:

«ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 1-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ արձանագրվել է, որ Մասնակցի հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ: Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի նիստը կասեցվել է և Մասնակիցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ մինչև Հանձնաժողովի նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում Մասնակցի կողմից շտկվել են անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված 2024 թվականի հոկտեմբերի 3-ի կայացած Հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 1.3.-րդ կետի համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և 3.1.1 կետի համաձայն հայտարարվել ընտրված մասնակից, սակայն հրավերի 10.1 կետով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները ու չի կնքել պայմանագիր:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 2024 թվականի նոյեմբերի 4-ին հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ՝ «gnumner.am» պաշտոնական տեղեկագրում:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

ա) մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:**

բ) որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Այսպիսով՝ Պատվիրատուն արձանագրում է, որ Մասնակիցը «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկարգով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Նշվածով պայմանավորված Մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակատերը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ Պատվիրատուն, որոշում է Մասնակից՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., շ 25/14, բն. 76 բն) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա. Հակոբյան